ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ԱԼԵՆ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Սիմոնյան,

Ղեկավարվելով «Ազգային Ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 98-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով և 99-րդ հոդվածի 1-ին մասով՝ Ձեզ եմ ներկայացնում «Բռնության ճանապարհով պետական իշխանությանը տիրանալու անթույլատրելիության և ժողովրդավարության պաշտպանության մասին» (այսուհետ՝ Հայտարարություն) Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի հայտարարության նախագիծը:

ՀՀ Ազգային ժողովի աշխատակարգի 70-րդ կետի համաձայն՝ սույն գրությանը կցվում են՝

1. «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության որոշումը՝ Հայտարարության նախագիծը շրջանառության մեջ դնելու և Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի քննարկմանը ներկայացնելու մասին.

2.հայտարարության նախագիծը.

3. հայտարարության նախագծի ընդունման հիմնավորումը.

Հայտարարության նախագծի հիմնական զեկուցողն է ՀՀ Ազ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ղեկավար Հայկ Կոնջորյանը:

Խնդրում եմ ներկայացված հայտարարության նախագիծը սահմանված կարգով դնել շրջանառության մեջ:

ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀԱՅԿ ԿՈՆՋՈՐՅԱՆ**

02.07.2025թ.

095, Երևան, Մ. Բաղրամյանի պող., 19 Հեռ.՝ (374 11) 513 281

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

«ԲՌՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆԸ ՏԻՐԱՆԱԼՈՒ ԱՆԹՈՒՅԼԱՏՐԵԼԻՈՒԹՅԱՆ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ

ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԴՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՔՆՆԱՐԿՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 98-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով, 99-րդ հոդվածի 1-ին մասով՝ ՀՀ Ազգ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունն իր 01.07.2025թ.-ի նիստում

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Հավանություն տալ և սահմանված կարգով դնել շրջանառության մեջ «Բռնության ճանապարհով պետական իշխանությանը տիրանալու անթույլատրելիության և ժողովրդավարության պաշտպանության մասին» (այսուհետ՝ Հայտարարություն) Ազգային Ժողովի հայտարարության նախագիծը:

2. Հայտարարության նախագծի հիմնական զեկուցողն է՝ ՀՀ Ազգ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ղեկավար Հայկ Կոնջորյանը:

ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀԱՅԿ ԿՈՆՋՈՐՅԱՆ**

01.07.2025թ.

095, Երևան, Մ. Բաղրամյանի պող., 19 Հեռ.՝ (374 11) 513 281

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

«ԲՌՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆԸ ՏԻՐԱՆԱԼՈՒ ԱՆԹՈՒՅԼԱՏՐԵԼԻՈՒԹՅԱՆ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը,

Պաշտպանելով Հայաստանի Հանրապետության ինքնիշխանությունը և տարածքային ամբողջականությունը,

Վերահաստատելով իր հավատարմությունը իրավունքի գերակայության և սահմանադրական կարգի սկզբունքներին,

Հիմնվելով ժողովրդավարության և մարդու իրավունքների համամարդկային արժեքների վրա,

Հավատարիմ մնալով Հայաստանի Հանրապետության սահմանադրության անխախտ դրույթին, համաձայն որի իշխանությունը պատկանում է ժողովրդին և ձևավորվում է միայն ժողովրդի կամքի ազատ արտահայտմամբ,

Մերժելով ահաբեկչությունը, սպառնալիքը և բռնության ցանկացած ձև քաղաքական պայքարում և հանրային կյանքի կազմակերպման մեջ,

Հիմք ընդունելով ահաբեկչության դեմ պայքարի հարցում ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունները,

ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է՝

1. Խստորեն դատապարտում է Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության, սահմանադրական կարգի և օրինական իշխանությունների դեմ նախապատրաստված ահաբեկչության փորձը, որը բացահայտվեց Հայաստանի Հանրապետության իրավապահ մարմինների կողմից 2025 թվականի հունիսին:
2. Ահաբեկչության և Սահմանադրական կարգի տապալմանն ուղղված ցանկացած գործողություն արժանանալու է ամենախիստ պատժի՝ համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և օրենքների:
3. Ահաբեկչությունը և բռնության ճանապարհով պետական իշխանությանը տիրանալու փորձերը ուղիղ հարված են Հայաստանի Հանրապետության ինքնիշխանությանը և ժողովրդին: Դրանք միտված են կազմալուծելու Հայաստանի ժողովրդավարական ինստիտուտները և հարվածելու պետության դիմադրողականությանը՝ ստեղծելով ներքին և արտաքին սպառնալիքներ Հայաստանի Հանրապետության և ՀՀ ժողովրդի համար:
4. Բոլոր այն քաղաքական ուժերն ու կազմակերպությունները, որոնք Հայաստանի Հանրապետությունում ծավալում են քաղաքական գործունեություն, պետք է աներկբայորեն դատապարտեն այս ահաբեկչության փորձը և երկրում ռազմական հեղաշրջման կամ որևէ այլ բռնի եղանակով սահմանադրական կարգի տապալման բոլոր կոչերը: Ահաբեկչության արդարացման յուրաքանչյուր դրսևորում ուղղված է Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության, տարածքային ամբողջականության և ժողովրդի՝ ընտրությունների միջոցով իշխանություն ձևավորելու սահմանադրական իրավունքի դեմ:
5. Անընդունելի ենք համարում Հայաստանում սահմանադրական կարգի տապալման և ՀՀ-ի դեմ վարվող հիբրիդային հարձակումներում Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու ներգրավման փորձերը: Վեհարանը պետք է ազատվի եկեղեցական հոգևոր մթնոլորտը խաթարող անձանցից, իսկ Եկեղեցին պետք է վերադառնա իր բուն առաքելությանը՝ հավատացյալների հոգևոր կարիքների սպասարկմանը:
6. Խիստ մտահոգիչ և դատապարտելի են Հայաստանի Հանրապետության նախկին ղեկավարների ու նրանց թիմակիցների՝ ահաբեկչությունը արդարացնող կամ աջակցող հայտարարությունները: Նրանք քաղաքական

պատասխանատվություն են կրում իրենց գործողությունների համար: Որևէ պատճառ կամ նեղ քաղաքական նպատակ չի կարող արդարացնել զինված խմբեր ստեղծելու, զենք-զինամթերք, պայթուցիկ նյութեր կուտակելու և երկրում սահմանադրական կարգը տապալելու ծրագրերը:

7. ՀՀ Ազգային ժողովը որպես Հայաստանի ժողովրդի առաջնային մանդատով օժտված լեգիտիմ ներկայացուցչական մարմին, կոչ է անում բոլոր քաղաքական ուժերին, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին և քաղաքացիներին՝

   Դատապարտել ահաբեկչությունը և բռնության միջոցով պետական իշխանության զավթման փորձերը,

   Աջակցել ՀՀ օրինական իշխանություններին իրենց սահմանադրական պարտականությունների կատարման մեջ,

   Նպաստել ազգային համերաշխությանը և պետական ինստիտուտների ամրապնդմանը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԲՌՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆԸ ՏԻՐԱՆԱԼՈՒ ԱՆԹՈՒՅԼԱՏՐԵԼԻՈՒԹՅԱՆ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2025 թվականի հունիսին Հայաստանի Հանրապետության իրավապահ մարմինների կողմից բացահայտվեց ահաբեկչության փորձ՝ միտված Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական կարգի տապալմանը և ՀՀ օրինական իշխանությունների բռնի հեռացմանը: Ըստ իրավապահ մարմինների կատարած բացահայտումների, ահաբեկչական խմբավորումը իր առջև նպատակ էր դրել Հայաստանի Հանրապետությունում ստեղծել քաոս, տապալել հասարակական կարգը և բռնության գործադրման ճանապարհով երկրում հաստատել ապօրինի իշխանություն:

Ահաբեկչական խմբավորման անդամները և ղեկավարները ՀՀ Ազգային ժողովի ընդդիմադիր խմբակցությունների և նրանց ղեկավարների հետ սերտորեն կապված անձինք են, ովքեր վերջին շրջանում Հայաստանում կազմակերպել են բողոքի ցույցեր, հանդես եկել իշխանափոխության կոչերով՝ երբեմն հնչեցնելով բացահայտ բռնության և ատելության կոչեր ընդդեմ ՀՀ ընտրված իշխանությունների:

Այս ահաբեկչական գործողությունների նպատակն էր տապալելու Հայաստանի Հանրապետությունում հաստատված ժողովրդավարական կառավարման համակարգը՝ լրջագույն սպառնալիքներ ստեղծելով թե՛ ներքին, թե՛ արտաքին մակարդակներում:

Համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը պատկանում է ժողովրդին և ժողովուրդնիր իշխանությունն իրականացնում է ազատ ընտրությունների, հանրաքվեների, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով, իսկ իշխանության յուրացումը որևէ կազմակերպության կամ անհատի կողմից

հանցագործություն է: Ահաբեկչությունը նախապատրաստած շարժման մասնակիցները նախապատրաստել են Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության, սահմանադրական կարգի և օրինական իշխանությունների դեմ

ահաբեկչության փորձ: Անընդունելի է հատկապես սահմանադրական կարգի տապալման մեջ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն ներգրավելու փորձերը:

Կարևորում ենք, որ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը, որպես ժողովրդի կողմից առաջնային մանդատով ընտրված լեգիտիմ մարմին, ընդունի հայտարարություն բռնության ճանապարհով պետական իշխանությանը տիրանալու անթույլատրելիության և ժողովրդավարության պաշտպանության մասին: